

Փաստաթղթի տեսակը	Կանոնակարգ			
Փաստաթղթի անվանումը	«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների			
Ոլորտային բլոկ	Հոգաբարձուների խորհուրդ			
Պատասխանատու ստորաբաժանում	Գլխավոր քարտուղարություն			
Դասակարգիչ (classification)	Հանրային	Համայնքային	x	Ներքին
Անմիջականորեն առընչվում է	Հոգաբարձուների խորհուրդ			
Հաստատող մարմինը	Հէս			
Հաստատման հիմքը / ամսաթիվը	N ASBT04-1911-C (1009)		10.09.2019	
Վերանայման պարբերականությունը	x	Անժամկետ	Տարեկան	Այլ (նշել)
Կարգավիճակը	x	Գործող	Ուժը կորցրած	
Փոփոխության հիմքը/ ամսաթիվը	N ASBT04-1916-V(1111)		11.11.2019	
Փոփոխության հիմքը/ ամսաթիվը	N ^o ASBT05-2104-C (0605)		06.05.2021թ.	
Փոփոխության հիմքը/ ամսաթիվը	N ^o ASBT05-2110-C (3009)		30.09.2021	
Ուժը կորցնելու հիմքը/ ամսաթիվը				

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 7 /ՅՈԹ/ ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՆԵՐԴԱՍԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Այբ կրթական հանգույց» հիմնադրամը (այսուհետև՝ նաև՝ Դպրոց) հանդիսանում է «Այբ» համակարգում¹ ներառված կազմակերպություններից մեկը: Դպրոցի հոգաբարձուների խորհրդի (այսուհետև՝ նաև՝ Հէս) 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների

¹ «Այբ» համակարգը (այսուհետև՝ նաև՝ Համակարգ) «Այբ» կրթական հիմնադրամի հետ փոխկապակցված և/կամ «Այբ» կրթական հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից Համակարգում ընդգրկված այնպիսի կազմակերպությունների համախումբ է, որոնց հիմնական նպատակը կրթական, մշակութային, բարեգործական, սոցիալական զարգացման ծրագրերի շուրջ համագործակցությունն է:

կանոնակարգը (այսուհետև՝ կանոնակարգ) բխում է Դպրոցի կանոնադրությունից և ընդունվում և հաստատվում է Դպրոցի Հի-ի կողմից:

1.2 Կանոնակարգը կազմվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և հանդիսանում է Դպրոցի Հի անհատական կազմի ձևավորման վերաբերյալ դրույթներ և Հի գործունեության կազմակերպման այլ առանձնահատկություններ սահմանող հիմնական փաստաթղթերից մեկը՝ Դպրոցի կանոնադրության հետ մեկտեղ:

2. ՀՈԳԱՔԱՐԾՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ. ՁԵՎԱԿՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳԸ

2.1. Դպրոցի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հոգաբարձուների խորհուրդն է (Հի):

2.2. Հի հերթական կազմի լիազորությունների ժամկետ է սահմանվում 2 /երկու/ տարի՝ հաշվարկված 2019 թվականի դեկտեմբերի 1-ից:

2.3. Դպրոցի հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները, որոնք ստանձնվել են հոգաբարձուների՝ արդեն իսկ ձևավորված խորհրդի կազմում, դադարում են հոգաբարձուների այդ խորհրդի լիազորությունների դադարմամբ /ավարտմամբ:

2.4. Դպրոցի հոգաբարձուների խորհուրդը բաղկացած է առավելագույնը 12 /տասներկու/ անդամից, որոնք ընտրվում են յոթ դասային խմբերից և հաստատվում Հի գործող անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

2.5. Հի անդամները ձայների պարզ մեծամասնությամբ իրենց կազմից ընտրում են Դպրոցի հոգաբարձուների խորհրդի նախագահին: Հի-ն կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

2.6. Հի անդամի լիազորությունը դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է Հի գործող կազմի կողմից միևնույն դասային խմբից՝ ոչ ուշ, քան հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին գործադիր տնօրենի ծանուցումն ստանալու օրվանից հետո՝ 30 /երեսուկ/ օրվա ընթացքում:

2.7. Հի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան 10 /տասը/ օրվա ընթացքում Դպրոցի գործադիր տնօրենը տեղեկացնում է հոգաբարձուների խորհրդի անդամներին և/կամ անդամին նշանակած անձանց կամ մարմիններին և/կամ Դպրոցի այլ մարմիններին՝ տվյալ դասային խմբի թեկնածու/ներ առաջադրելու նպատակով:

2.8. Հի նիստերին խորհրդակցական ձայնով և/կամ միայն մասնակցության իրավունքով ընտրվող անձանց և/կամ մարմինների հարցի որոշումը վերապահված է բացառապես Հի-ին՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

2.9. Հի նիստերը և գործունեությունը արդյունավետ կազմակերպելու և վարելու համար Հի կողմից ձայների պարզ մեծամասնությամբ կարող է հաստատվել Աշխատանքային գործունեության կանոնակարգ, որը հստակ կսահմանի յուրաքանչյուր որոշվող հարցի մանրամասները, ինչպես նաև ժամկետներն ու կարգը:

3. Հի ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ Հի ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ. Հի 7 /ՅՈԹ/ ԴԱՍԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՆԵՐԴԱՍԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Հոգաբարձուների խորհրդի անհատական կազմի ձևավորման գործընթացում թեկնածուներն ընտրվում և հաստատվում են հետևյալ 7 /յոթ/ դասային խմբերին համապատասխանելու հիմքով, ընդ որում, դասային խմբերի հիման վրա Հես նոր կազմը իրավագոր Է 2019 թվականի դեկտեմբերի 1-ից (Հես նոր կազմի գործողության սկիզբ)։

3.1.1. Ռազմավարական հովանավոր /առավելագույնը Հես-ի 2 անդամի ներգրավվածություն/,

3.1.2. Խոշոր հովանավոր /առավելագույնը Հես-ի 2 անդամի ներգրավվածություն՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ/,

3.1.3. Շարունակական հովանավոր՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ /առավելագույնը Հես-ի 3 անդամի ներգրավվածություն/,

3.1.4. Շարունակական հովանավոր /առավելագույնը Հես-ի 2 անդամի ներգրավվածություն/²,

3.1.5. Ռազմավար /առավելագույնը Հես-ի 1 անդամի ներգրավվածություն/,

3.1.6. «Այբ» դպրոցի շրջանավարտ /առավելագույնը Հես-ի 1 անդամի ներգրավվածություն՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ/,

3.1.7. Ուսուցիչների խմբի կողմից ընտրված ներկայացուցիչ /առավելագույնը Հես-ի 1 անդամի ներգրավվածություն/:

3.2. Կանոնակարգի 3.28., 3.29., 3.30., 3.31. կետերով սահմանված դասային խմբերում որպես քվեարկող առաջադրվելու համար՝ համայնքի՝ յուրաքանչյուր դասային խմբի համար սահմանված չափանիշներին համապատասխանող անդամները սեփական նախաձեռնությամբ (իրենց կողմից համապատասխան դիմումի³ լրացմամբ) և Դպրոցի Հես կողմից հաստատման առկայության դեպքում ընդգրկվում են տվյալ դասային խմբի քվեարկողների կազմում::

3.3. Եթե Հես-ի կազմում առաջադրված թեկնածուն միաժամանակ բավարարում Է մեկ կամ ավելի դասային խմբին ներկայացվող պահանջներին, ապա նա կարող Է որպես ընտրող մասնակցել դասային յուրաքանչյուր խմբի կազմում, սակայն որպես թեկնածու առաջադրվել միայն մեկ դասային աստիճանով՝ իր նախընտրությամբ:

3.4. Յուրաքանչյուր դասային խմբերի շրջանակներում քվեարկության մասնակիցների վերջնական կազմը հաստատվում Է Հես կողմից:

3.5. Խոշոր և ռազմավարական հովանավոր դասային խմբի թեկնածուն որպես Հես անդամ ընտրվելու դեպքում Հես նիստերին ֆիզիկական ներկայության անհնարինության դեպքում իրավունք ունի լիազորել այլ անձի իր անունից, ի շահ իրեն և քվեարկելու ու որոշումներ կայացնելու իրավասությամբ մասնակցելու Հես նիստերին: Ընդ որում, լիազորված անձի մասին տեղեկատվությունը տրամադրվում Է իր դասային խմբի անդամներին և Հես-ին մինչև ընտրությունների մեկնարկը և չի կարող փոփոխվել ընտրվելու դեպքում Հես-ի գործունեության ողջ ընթացքում:

3.6. Հես անդամ չեն կարող ընտրվել Դպրոցի այլ ղեկավար մարմինների անդամները/ներկայացուցիչները: Դեկավար մարմնի անդամ/ներկայացուցիչ չհանդիսացող Դպրոցի այլ աշխատողները (օրինակ՝ ուսուցիչներ) կարող են ընտրվել Հես անդամ:

² Սույն կանոնակարգի 3.1.1, 3.1.2, 3.1.3, 3.1.4 կետերում սահմանված դասային խմբերում ընդգրկված իրավաբանական անձինք Հես ձևավորման գործընթացում և հետագա գործունեության ընթացքում հանդես են գալիս իրենց կողմից նշանակված ներկայացուցչի միջոցով:

³ Դիմումի օրինակելի ձևը հաստատվում և կցվում Է սույն կանոնակարգին:

3.7. Դպրոցը Հիւ ձևավորման գործընթացը սկսելու մասին տեղեկացնում է համայնքին և բոլոր դասային խմբերի շրջանակներում պոտենցիալ քվեարկողներին: Ընդ որում, սույն կանոնակարգի 3.28., 3.29, 3.30., 3.31. կետերով սահմանված դասային խմբերում քվեարկող առաջադրված պոտենցիալ անդամներին Դպրոցի կողմից սահմանված ժամկետներում ուղարկվում են իրենց կողմից նախորդ երկու տարիների ընթացքում կատարված նվիրատվությունների⁴ անհատական պատմություններ՝ նվիրատվության չափի նշմամբ⁵ (ռազմավարական հովանավորը՝ գործունեության ամբողջ ընթացքի համար):

3.8. Գործընթացի մեկնարկին Դպրոցի պաշտոնական կայքէջում հրապարակվում են Հիւ ձևավորման սույն կանոնակարգը, ինչպես նաև Հիւ անդամների կողմից ստորագրման ենթակա Էթիկայի կանոնները: Դպրոցի կայքում տեղադրվում է նաև Էլփոստի հասցեների թարմացման հնարավորության ընթացակարգը:

3.9. Բարերարը/հովանավորը Դպրոցի կողմից նվիրատվության չափի մասին տեղեկատվության ստացումից հետո 5 օրյա ժամկետում հաստատում է իր նվիրատվությունների չափը կամ հայտնում է իր անհամաձայնության մասին: 5 օրյա ժամկետում չարձագանքելը մեկնաբանվում է որպես նվիրատվության գումարի չափի հաստատում բարերարի կողմից:

3.10. Մեկնարկին հաջորդում է Հիւ որևէ դասային խմբում որպես քվեարկող ընդգրկվելու պոտենցիալ անդամի հայտարարությունը Դպրոցի կողմից կայքում հրապարակված Էլփոստի հասցեին մեկ կամ միաժամանակ մի քանի դասային խմբերում որպես քվեարկող հանդես գալու մասին:

3.11. Որպես քվեարկող հանդես գալու և դիմումների լրացման ժամկետը սահմանվում է Դպրոցի կողմից պոտենցիալ քվեարկողների Էլփոստի հասցեներին ծանուցում ուղարկելու միջոցով, որի մեջ հստակ սահմանվում են նաև թեկնածություն առաջադրելու ժամկետներն ու կարգը, որոնք չեն կարող գերազանցել ընտրությունների համար նախատեսված ժամկետները:

3.12. Դպրոցի կողմից հաստատված ժամկետներում «Ռազմավարական հովանավոր», «Ֆինանսական խոստմամբ Շարունակական հովանավոր» և «Շարունակական հովանավոր» դասային խմբերի պոտենցիալ քվեարկողներին հնարավորություն է տրվում հաստատելու իրենց անհատական պատմություններում նշված նվիրատվությունների ընդհանուր չափը կամ լրացնելու այդ խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար պակասող գումարը (գումարային հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով լրացուցիչ նվիրատվության գումարի՝ Դպրոցի հաշվին մուտքագրման օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված տարադրամի փոխարժեքը):

3.13. Դպրոցի հոգաբարձուների խորհուրդը սահմանված ժամկետում պոտենցիալ քվեարկողների կողմից հաստատումներն ստանալուց հետո ստուգում է առաջադրված անձանց համապատասխանությունը դասային բնութագրիչներին:

⁴ Սույն կանոնակարգի շրջանակում նվիրատվությունը կարող է մեկնաբանվել որպես նվիրատվություն, նվիրաբերություն, ինչպես նաև այլ ձևով անհատույց փոխանցման փաստ՝ բացառապես դրամական և բնաիրային արտահայտությամբ: Սույն կետի իմաստով չեն ներառվում ստացված դրամաշնորհները:

⁵ Դպրոցը 3.28, 3.29, 3.30, 3.31 դասային խմբերում նշված յուրաքանչյուր հովանավորի/բարերարի տեղեկացնում է սահմանված ժամանակահատվածի համար նվիրատվության չափի մասին: Նվիրատվության չափի վերաբերյալ առարկություններ ունենալու դեպքում պոտենցիալ թեկնածուն կրում է անհամապատասխանությունը շտկելու նպատակով անհրաժեշտ ապացույցներ հավաքելու և ներկայացնելու ռիսկը, որի հիման վրա թեկնածուները հաստատելու և կամ որպես ընտրող նշանակելու հարցի վերջնական լուծումը վերապահվում է Դպրոցի Հիւ-ին:

3.14. Դասային խմբերի քվեարկողների ցանկերը հաստատելուց հետո ՀԽ-ն յուրաքանչյուր դասային խմբին տեղեկացնում է տվյալ դասային խմբի անդամների կազմը:

3.15. Յուրաքանչյուր դասային խմբում (բացի «Ռազմավար» դասային խմբից) թեկնածուները կարող են ինքնաառաջադրվել կամ առաջադրվել համապատասխան դասային խմբի որևէ քվեարկողի կողմից:

3.16. Հիս անդամի յուրաքանչյուր թեկնածու ծանոթանում է Կանոնակարգով սահմանված դրույթներին Դպրոցի կայքից:

3.17. Դասային խմբում ընդգրկված անձինք ազատ են իրենց հարմար ձևաչափով կազմակերպել ներխմբային քննարկումներ՝ առաջադրվող թեկնածուների՝ Դպրոցի զարգացման տեսլականին ծանոթացման և այլ նմանատիպ հարցերի շուրջ: Դասային խմբերի նախաձեռնությամբ այդ քննարկումներին կարող են մասնակցել Դպրոցի ներկայացուցիչները: Ընտրության օրերը և մեկնարկին նախորդող օրը լռության օրեր են:

3.18. Դպրոցը «Ռազմավարական հովանավոր», «Խոշոր հովանավոր», «Շարունակական հովանավոր» և «Շարունակական հովանավոր՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ» դասերի համար կազմակերպում է ներդասային առանձին ընտրություններ՝ ռեյտինգային կարգով, թեկնածուներին ուղարկված ծանուցումներում հստակ սահմանված ժամկետներում (տե՛ս 3.27 կետ):

3.19. Ռեյտինգային կարգով ընտրության գործընթացը հետևյալն է. բոլոր քվեարկողներն ունեն այնքան ձայն, որքան տեղեր են նախատեսված այդ դասային խմբի համար Հիս կազմում և բաշխում են իրենց ձայները տարբեր թեկնածուների միջև՝ յուրաքանչյուր թեկնածուին ոչ ավել, քան մեկ ձայն համամասնությամբ: Հաղթող են ճանաչվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուները: Ռեյտինգային ընտրությունը միափուլ է, փակ: Միևնույն դասի շրջանակներում հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև կազմակերպվում է վիճակահանություն⁶:

3.20. Դպրոցը «Ուսուցիչների խմբի կողմից առաջադրված ներկայացուցիչ» դասային խմբի համար կազմակերպում է երկփուլանի ընտրություններ, որոնց հիման վրա էլ հրապարակվում են դրանց արդյունքները:

3.21. ««Այբ» դպրոցի շրջանավարտ» դասային խմբի համար ներկայացուցիչ նշանակվում է Շրջանավարտների ակումբի տվյալ պահին գործող նախագահը:

3.22. Երկփուլանի ընտրությունների առաջին փուլում յուրաքանչյուր քվեարկող իր նախընտրությունները բաշխում է առավելագույնը երեք թեկնածուի միջև՝ բալային համակարգով: Բալային համակարգում առաջին նախընտրելի թեկնածուին տրվում է «10» բալ, երկրորդ նախընտրելիին՝ «8» բալ, երրորդ նախընտրելիին՝ «6» բալ: Երկրորդ փուլ են անցնում առաջին փուլում առավելագույն բալեր հավաքած երկու թեկնածուն: Հավասար բալեր հավաքած թեկնածուների միջև կազմակերպվում է վիճակահանություն (տե՛ս Ծանոթագրություն 6): Երկրորդ փուլում յուրաքանչյուր քվեարկող իր միակ ձայնը տալիս է երկու թեկնածուներից մեկին: Հաղթող է ճանաչվում առավելագույն ձայներ հավաքած

⁶ Թեկնածուները հրավիրվում են առցանց կամ առկա հանդիպման, մի քանի անկախ ներկայացուցիչների կողմից թեկնածուների անունները գրվում են թղթերի վրա, փակվում, ապա վիճակահանությամբ դուրս է բերվում թեկնածուի անունը: (3.20 և 3.20.1 կետերը փոփոխվել են 30.09.2021թ.)

թեկնածուն: Հավասար ձայներ հավաքելու դեպքում կազմակերպվում է վիճակահանություն տե՛ս Ծանոթագրություն 6): **Եթե թեկնածուների քանակը երկուս է կամ պակաս, ապա անմիջապես իրականացվում է ընտրության երկրորդ փուլը:**

3.23. Ռեյտինգային և երկփուլանի ներդասային ընտրությունների ավարտից հետո Դպրոցն ամփոփում է արդյունքները և տեղեկացնում դրանց մասին յուրաքանչյուր դասի շրջանակներում առաջադրված բոլոր թեկնածուներին և գործող Հիւ-ին:

3.24. Յուրաքանչյուր ընտրված թեկնածու գրավոր կերպով ընդունում է սույն կանոնակարգի, Դպրոցի Հիւ կողմից վավերացված էթիկայի կանոնների բոլոր դրույթները՝ ստորագրելով դրանց՝ իրեն հանձնված օրինակի ստորին հատվածում:

3.25. Գործող Հիւ-ն հաստատում է նոր Հիւ կազմը՝ հիմք ընդունելով ընտրությունների արդյունքները, թեկնածուի կողմից ստորագրված սույն կանոնակարգը և էթիկայի կանոնները, ինչպես նաև ֆինանսական միջոցների ներգրավման խոստում ունեցող դասային խմբերից ընտրված անդամների կողմից ստորագրված նվիրատվության պայմանագրերը:

3.26. Սույն կանոնակարգով չկարգավորվող կամ տարածայնություններ առաջացնող հարցերի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը վերապահված է Դպրոցի Հիւ-ին:

3.27. Սույն կանոնակարգի 3-րդ գլխով սահմանված ընթացակարգերը գործելու են նաև Հիւ յուրաքանչյուր հաջորդ ընտրությունների դեպքում, ընդ որում, համապատասխան ընթացակարգերի ժամկետները կսահմանվեն Դպրոցի Հիւ կողմից՝ սույն կանոնակարգի 3.27 կետի տրամաբանությամբ և յուրաքանչյուր փուլի համար սահմանված ժամկետների և փուլերի հերթականության պահպանմամբ:

3.28. Սույն կանոնակարգի հիման վրա Հիւ առաջին և հերթական կազմերի ձևավորման ժամանակացույց:

Ժամկետ	Գործողություն
Մինչև տվյալ տարվա ⁷ հոկտեմբերի 01-ը	Գործընթացի մեկնարկի մասին տեղեկացում համայնքին
Մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 6-ը	Հաստատումների կամ առարկությունների ստացման վերջնաժամկետ
Մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 18-ը.	Հայտարարությունների ներկայացման վերջնաժամկետ
Մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 9-ից 20-ը ընկած ժամանակահատվածում	Ցուցակների ճշգրտման աշխատանքներ
Մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 21-ը	Դպրոցի Հիւ կողմից յուրաքանչյուր դասային խմբում քվեարկողների ցանկերի հաստատում և հրապարակում տվյալ դասի քվեարկողների շրջանում
Մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 22-ից 27-ը ընկած ժամանակահատվածում	Թեկնածուների առաջադրում կամ ինքնաառաջադրում

⁷ «Տվյալ տարի» եզրույթը մեկնաբանվում է որպես Հիւ կազմի լիազորությունների ավարտի և հերթական կազմի ձևավորման տարի:

Մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 28-ից 30-ը ընկած ժամանակահատվածում	Առաջադրված թեկնածուների համաձայնության/ինքնաբացարկի ստացում
Մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ը	Ըստ առանձին դասային խմբերի թեկնածուների ցանկերի հրապարակում տվյալ դասի քվեարկողների շրջանում
Մինչև տվյալ տարվա նոյեմբերի 1-ից 9-ը ընկած ժամանակահատվածում	Ներդասային քննարկումներ
Մինչև տվյալ տարվա նոյեմբերի 11-ից 18-ը ընկած ժամանակահատվածում	Ներդասային քվեարկություններ /ընտրություն/
Մինչև տվյալ տարվա նոյեմբերի 18-ից 22-ը ընկած ժամանակահատվածում	Քվեարկության արդյունքների ամփոփում
Մինչև տվյալ տարվա նոյեմբերի 22-ը	Քվեարկության արդյունքների ներկայացում ՀԽ-ին և քվեարկողներին
Մինչև տվյալ տարվա նոյեմբերի 23-ից 28-ը ընկած ժամանակահատվածում	Գործող ՀԽ կողմից Նոր ՀԽ կազմի հաստատում
Մինչև տվյալ տարվա նոյեմբերի 23-ից 28-ը ընկած ժամանակահատվածում	ՀԽ-ի կազմի հաստատման մասին տեղեկացում ՀԽ-ի ձևավորման գործընթացի բոլոր մասնակիցներին
Մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը	Նոր կազմավորված ՀԽ-ն սկսում է իր աշխատանքը

3.29. Ռազմավարական հովանավոր.

3.29.1. ՀԽ կազմում որպես ռազմավարական հովանավոր առաջադրվելու համար՝ Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին վերջիններիս հիմնադրման պահից նվիրատվությունների ընդհանուր գումարը պետք է գերազանցի 1.000.000 /մեկ միլիոն/ ԱՄՆ դոլարը (գումարային հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով գումարի՝ հաշիվներին մուտքագրման օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված տարադրամի փոխարժեքը):

3.29.2. Սույն կանոնակարգի հիման վրա ՀԽ ընտրություններից հետո՝ ՀԽ կազմի յուրաքանչյուր հաջորդ ընտրությունների դրությամբ (յուրաքանչյուր 2 /երկու/ տարին մեկ անգամ), եթե տվյալ հովանավորի կողմից Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին նվիրատվությունները գերազանցում են 1.000.000 /մեկ միլիոն/ ԱՄՆ դոլարը, ապա տվյալ հովանավորն ընդգրկվում է տվյալ դասային խմբի քվեարկողների կազմում:

3.30. Խոշոր հովանավոր.

3.30.1. ՀԽ-ի «խոշոր հովանավոր» դասային խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար թեկնածուները պարտավորվում են համապատասխան ընտրությամբ ձևավորվող ՀԽ-ի գործունեության երկու տարվա ընթացքում Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին՝ կանոնադրական նպատակների կամ «Այբ» դպրոցի համար, նվիրատվություն անել ոչ պակաս,

քան 60.000 /վաթսուն հազար/ ԱՄՆ դոլար (գումարային հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով սվիրատվության գումարի՝ հաշվին մուտքագրման օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված տարադրամի փոխարժեքը):

3.30.2. Տվյալ դասային խմբում յուրաքանչյուր անդամի ընդգրկելու վերաբերյալ Հն-ն կայացնում է անհատական որոշում: Սվիրատվության պարտավորություն ստանձնելու կամ կատարելու փաստը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է խմբում ընդգրկվելու համար: Այս հարցով Հն-ի որոշումը պարզաբանման և մեկնաբանության ենթակա չէ:

3.30.3. Կանոնակարգի 3.29.1. կետով սահմանված պարտավորությունը ամրագրվում է Դպրոցի և որպես խոշոր հովանավոր դասային խմբի անդամի միջև կնքվող գրավոր պայմանագրով, որի հիման վրա սահմանված տարեկան վճարումներն իրականացվում են Հն յուրաքանչյուր աշխատանքային տարվա սկզբին նախորդող երկու շաբաթվա ընթացքում: Ընդ որում սվիրատվության ֆինանսական աղբյուրը չպետք է լինի վարկային և/կամ փոխառու միջոց՝ թե՛ Դպրոցի, թե՛ խոշոր հովանավորի համար, և միջոցները պետք ուղղվեն Դպրոցի կանոնադրական նպատակների իրականացմանը⁸:

3.31. Շարունակական հովանավոր՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ.

3.31.1. Հն կազմում շարունակական հովանավոր՝ ֆինանսական միջոցների ներգրավման խոստմամբ (այսուհետև նաև՝ ֆինանսական խոստմամբ Շարունակական հովանավոր) դասային խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար տվյալ անձի՝ Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին սվիրատվությունների ընդհանուր գումարը այս խմբում որպես քվեարկող ընդգրկվելու պահին պետք է 01/2017-12/2018 թվականների դրությամբ կազմի նվազագույնը 12.000 /տասներկու հազար/ ԱՄՆ դոլար (գումարային հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով սվիրատվության գումարի՝ հաշվներին մուտքագրման օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված տարադրամի փոխարժեքը):

3.31.2. Սույն կանոնակարգի ուժի մեջ մտնելու տարեսկզբից՝ ֆինանսական խոստմամբ Շարունակական հովանավոր դասային խմբում ընդգրկվելու համար հիմք է ընդունվելու միայն Դպրոցին արված սվիրատվությունը (դա կարող է արվել նաև «Այբ» կրթական հիմնադրամի միջոցով, սակայն պետք է ուղղված լինի Դպրոցին)⁹:

3.31.3. Ֆինանսական խոստմամբ Շարունակական հովանավոր դասային խմբում իրենց անդամությունը պահպանելու համար անդամները պետք է շարունակեն սվիրատվություններ կատարել Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին՝ կանոնադրական նպատակների կամ «Այբ» դպրոցի համար, երկու տարվա համար նվազագույնը 12.000 /տասներկու հազար/ ԱՄՆ դոլարի չափով:

3.31.4. Ֆինանսական խոստմամբ Շարունակական հովանավոր դասային խմբից առաջադրված թեկնածուն պարտավորվում է Հն գործունեության երկու տարիների ընթացքում Դպրոցին սվիրատվություն անել ոչ պակաս, քան 12.000 /տասներկու հազար/ ԱՄՆ դոլար (գումարային հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով սվիրաբերության՝ Դպրոցի հաշվին մուտքագրման օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված տարադրամի փոխարժեքը):

3.32. Շարունակական հովանավոր.

⁸ Սույն կետով սահմանված կարգավորումները տարածվում են նաև այն բոլոր դասային խմբերի անդամների հետ կապված իրավահարաբերությունները կարգավորելիս, ովքեր ունեն ֆինանսական միջոցների ներգրավման խոստում:

⁹ Սույն կետը տարածվում է նաև սույն կանոնակարգով սահմանված շարունակական հովանավոր դասային խմբի շրջանակներում:

3.32.1. Հն կազմում շարունակական հովանավոր դասային խմբում որպես քվեարկող ընդգրկվելու համար տվյալ անձի՝ Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին նվիրատվությունների ընդհանուր գումարը այս խմբում որպես քվեարկող ընդգրկվելու պահին պետք է 01/2017-12/2018 թվականների դրությամբ կազմի նվազագույնը 3.000 /երեք հազար/ ԱՄՆ դոլար (գումարային հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով նվիրատվության գումարի՝ հաշիվներին մուտքագրման օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված տարադրամի փոխարժեքը):

3.32.2. Շարունակական հովանավոր դասային խմբում իրենց անդամությունը պահպանելու համար անդամները պետք է շարունակեն նվիրատվություններ կատարել Դպրոցին և/կամ «Այբ» կրթական հիմնադրամին՝ կանոնադրական նպատակների կամ «Այբ» դպրոցի համար, երկու տարվա համար նվազագույնը 4.000 /չորս հազար/ ԱՄՆ դոլարի չափով:

3.33. Ռազմավար.

3.33.1. Հն կազմում որպես ռազմավար ընտրվելու համար՝ թեկնածուները առաջադրվում և ընտրվում են նորընտիր Հն-ի կողմից՝ Հն-ի ձևավորումից հետո՝ երկու ամսվա ընթացքում:

3.33.2. Հն կազմում որպես ռազմավար առաջադրվելու համար՝ թեկնածուն պետք է ունենա առնվազն 5 /հինգ/ տարվա աշխատանքային փորձ կրթության ոլորտում և ծառայեցնի այդ փորձը Դպրոցի զարգացման գործին:

3.33.3. Հն կազմում որպես ռազմավար առաջադրվելու համար՝ թեկնածուն պետք է ունենա Դպրոցի զարգացման հստակ տեսլական, լինի մոտիվացված և կրթության զարգացմամբ ոգեշնչված անձնավորություն:

3.33.4. Հն ռազմավարի լիազորությունները դադարում են գործող Հն լիազորությունների դադարման հետ միաժամանակ:

3.34. «Այբ» դպրոցի շրջանավարտ.

3.34.1. Հն կազմում ««Այբ» դպրոցի շրջանավարտ» դասային խմբի ներկայացուցիչ առաջադրվելու և ընտրության գործընթացին մասնակցելու համար՝ անձը ընտրության պահին պետք է զբաղեցնի Շրջանավարտների ակումբի նախագահի պաշտոնը:

3.34.2. Որպես «Այբ» ավագ դպրոցի շրջանավարտ Հն անդամ ընտրվելու պարագայում տվյալ անդամը պարտավորվում է իր՝ Հն գործունեության երկու տարիների ընթացքում Դպրոցին նվիրատվություն անել ոչ պակաս, քան 200 /երկու հարյուր/ ԱՄՆ դոլար (գումարային հաշվարկը կատարվում է՝ հիմք ընդունելով նվիրատվության՝ Դպրոցի հաշվին մուտքագրման օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հայտարարված տարադրամի փոխարժեքը):

3.35. Ուսուցիչների խմբի կողմից ընտրված ներկայացուցիչ.

3.34.1. Որպես ուսուցիչների խմբի քվեարկողներ կարող են ընդգրկվել ընտրության պահին «Այբ» դպրոցի (տարրական, միջին, ավագ) ուսուցիչները, նախագծային ուսումնառության ակումբների ղեկավարները, դասղեկները, դասարանների պատասխանատուները:

3.34.2. Հն կազմում որպես ուսուցիչների խմբի կողմից ընտրված ներկայացուցիչ Դպրոցի ուսուցիչների կողմից առաջադրվելու համար՝ անձը պետք է հանդիսանա «Այբ» դպրոցի (տարրական, միջին, ավագ) գործող ուսուցիչ կամ կրթության ոլորտում ունենա առնվազն տասը տարվա աշխատանքային փորձ:

(3.29.1, 3.30.3 և 3.31.2 կետերն փոփոխվել են 06.05.2021թ.): (3.33.1 կետը փոփոխվել է 30.09.2021թ.)

4. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգը հաստատված է Դպրոցի հոգաբարձուների խորհրդի կողմից: Դրա հետագա փոփոխությունները կատարվում է Դպրոցի Հի որոշմամբ:

4.2. Կանոնակարգի դասային խմբերից յուրաքանչյուրով առաջադրվող թեկնածուն տեղեկացված է առ այն, որ և որպես ընտրող, և որպես թեկնածու առաջադրման/դիմումի ժամկետները խախտելը հանգեցնում է համապատասխան ցուցակում չընդգրմանը, որը ենթակա չէ բողոքարկման:

4.3. Կանոնակարգով չկարգավորված հարցերը լուծվում են Դպրոցի կանոնադրությանը և Դպրոցի հոգաբարձուների խորհրդի որոշումների համաձայն:

4.4. Կանոնակարգով և Էթիկայի կանոններով սահմանված դրույթները և պարտականությունները Հի անդամի կողմից խախտելը կարող է հանգեցնել Հի տվյալ անդամի հեռացմանը Հի կազմից:

ԴԻՄՈՒՄ

«ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«__» ____ 20__թ.

1	Հավակնորդի անունը, հայրանունը, ազգանունը		
2	Հեռախոսահամարները	Բջջային	
		Աշխատանք	
3	Հասցե	Բնակության	
		Աշխատանք	
4	Էլեկտրոնային հասցե		
5	Հն-ի նախընտրելի դասային խումբ/եր	1.	
		2.	
		3.	
		4.	
		5.	

ԾԱՆՈԹԱՑԵԼ ԵՄ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի կանոնադրությանը, «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 7 /յոթ/ դասային խմբերի ներդասային ընտրությունների կանոնակարգին, Էթիկայի կանոններին, համաձայն եմ դրանց դրույթներին և ինդրում եմ քվեարկողի կարգավիճակի հաստատումից հետո դրանք կիրառել իմ նկատմամբ:

ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՄ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի Հն-ի կազմում ընտրվելու դեպքում ստորագրել Էթիկայի կանոնները:

ՏԱԼԻՍ ԵՄ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ «Այբ կրթական հանգույց» հիմնադրամին՝ ստանալու ինձ վերաբերող տեղեկություններ, որոնք կարող են անհրաժեշտ լինել Հն կոնկրետ դասային խմբին ներկայացվող չափանիշներին իմ համապատասխանությունը ստուգելու համար, ինչպես նաև օգտագործելու սույն դիմումում նախատեսված անձնական տվյալները՝ Հն թեկնածության և անդամության շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից՝ ինդրում եմ

Հաստատել «Այբ կրթական հանգույց» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ձևավորման գործընթացում իմ ներգրավումը որպես քվեարկող՝ _____ դասային խմբում:

Դիմումատու՝ _____

ստորագրություն

անուն, հայրանուն, ազգանուն